ՀՏԴ : 929 : 902.6(479.25) Տիրացյան
DOI: 10.54503/0135-0536-2026.2-279

ԳԵՎՈՐԳ ԱՐՏԱՇԵՍԻ ՏԻՐԱՑՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

Այս տարի լրանում է անվանի հայագետ Գևորգ Արտաշեսի Տիրացյանի ծննդյան 100-ամյակը: Նա ծնվել է 1926 թ. սեպտեմբերի 18-ին Ռումինիայի Չետատեա–Ալբա քաղաքում՝ ճանաչված մտավորական և ուսուցիչ Արտաշես Տիրացյանի ընտանիքում: Լեզուների ու հին պատմության հանդեպ նրա նախասիրությունը, որն ի հայտ է գալիս արդեն դպրոցական տարիքում, հիմք է դառնում 1945 թ. Բուխարեստի համալսարանի պատմության ֆակուլտետ ընդունվելու համար: Գ. Տիրացյանի գիտական գործունեությունն սկսվել է դեռևս ուսանողական տարիներին: Համալսարանի երկրորդ կուրսի ուսանողը Ռումինիայի «Հայաստանյան ճակատ» կազմակերպության երիտասարդական բաժնի նորաստեղծ խմբում 1947 թ. կարդում է «Հայ ժողովրդի ծագումը» խորագրով իր առաջին զեկուցումը: Այդ օրվանից՝ մինչև իր լուսավոր կյանքի անսպասելի ու անժամանակ ընդհատումը, նրա գործունեությունն անխզելիորեն կապվում է հայագիտության հետ:



Տիրացյանների ընտանիքը 1948 թ. հայրենադարձվում է, և ուսումնատենչ երիտասարդը նույն տարում դառնում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող: 1952 թ. ավարտում է համալսարանը և ընդունվում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա. նրա գիտական ղեկավարն էր Լենինգրադի պետական Էրմիտաժի փոխտնօրեն, նշանավոր հնագետ ու արևելագետ Բորիս Պիոտրովսկին: Ականավոր գիտնականներ Հովսեփ Օրբելու և Կամիլլա Տրևերի հետ անմիջական շփումները նույնպես կարևոր դեր են խաղացել ուշիմ հնագետ-պատմաբանի գիտական ընդգրկուն հետաքրքրությունների ձևավորման գործում:

Տաղանդավոր երիտասարդ գիտնականը 1956 թ. Լենինգրադում հաջողությամբ պաշտպանում է «Հայաստանի մ. թ. առաջին դարերի նյութական մշակույթն ըստ Գառնիի դամբանադաշտի և բաղնիքի տվյալների» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը և իր աշխատանքային կենսագրությունն սկսում ԳԱ պատմության ինստիտուտում: Հաջորդ տարի նրան շնորհվում է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Գ. Տիրացյանը 1959 թ. աշխատանքի է անցնում նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, որի հետ է կապվում նրա հետագա գիտական ողջ գործունեությունը՝ տասնյակ տարիներ շարունակ: Սկզբում աշխատում է որպես ավագ գիտաշխատող, 1974–1993 թթ.՝ Հին Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ, 1981–1988 թթ.՝

* Ներկայացվել է 16. IV. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

ինստիտուտի փոխտնօրեն, իսկ 1988–1993 թթ.՝ տնօրեն: Այս ինստիտուտում էլ գրում է իր դոկտորական ատենախոսությունը՝ «Հայաստանը մ. թ. ա. VI – մ. թ. III դարերում» թեմայով, որը պաշտպանում է 1986 թ.՝ հաջորդ տարի արժանանալով պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի: Տաղանդաշատ հնագետի բազմամյա բեղմնավոր գիտական գործունեությունը միտված էր մեկ նպատակի՝ Հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրությանը: Գիտնականի պատմահնագիտական մեծարժեք ուսումնասիրությունները ժամանակագրորեն ընդգրկում են հայ ժողովրդի պատմության մի հազարամյակ:

Շատ լայն էր Գ. Տիրացյանի պատմագիտական հետաքրքրությունների շրջանակը: Նրա ուսումնասիրության թեմաներից էր, մասնավորապես, Հին հայկական պետության կազմավորման հիմնախնդիրը: «Երվանդունիները Հայաստանում» (1958 թ.) ուսումնասիրությունն արժեքավոր ձեռքբերում է հայ պատմագիտության բնագավառում: Հետազոտությունը կատարվել է Ուրարտու–Հայաստան մշակութային ժառանգորդության գաղափարի լույսի ներքո: Առաջ է քաշվել մինչ այսօր արդիական այն գիտական տեսակետը, որ Երվանդունիները, ուրարտացիներից հետո, Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորման նոր փորձ են կատարել: Դրա ազդեցությունն զգալի է իշխող հաջորդ հայկական հարստությունների վրա՝ միավորիչ պետական քաղաքականությունը շարունակելու առումով: Նրա այլ աշխատություններում ևս արծարծվում է այն միտքը, որ երկու սատրապությունների բաժանված Հայաստանը, այնուամենայնիվ, շարունակում է հանդես գալ մեկ անվան տակ՝ Արմինա: Արտաշես I–ի օրոք նոր հիմքերի վրա առաջացած պետականության հարատևությունը բացատրվում է դասակարգային հասարակության հասունությամբ և հայ ժողովրդի կազմավորման բարեհաջող ընթացքով[1]: Գ. Տիրացյանի դիտարկմամբ՝ մեզ ժառանգություն մնացած ուղենիշ – գաղափարը՝ Հայկական լեռնաշխարհի ամբողջականության վերաբերյալ, ծագել է հայկական առաջին հարստության ու դրան նախորդող ժամանակներում:

Իր գիտական ուղու վաղ փուլից սկսած՝ Գ. Տիրացյանն անդրադարձել է նաև հայոց բնօրրանում հայ–սկյութական առնչությունների խնդրին: Նա կարծիք է հայտնել, որ Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները Հայաստանում սկյութական հարստության ժամանակաշրջանի մասին՝ կիմերների ու սկյութների առաջավորասիական պատմության հետ կապված «իրադարձությունների կնիքն են կրում»[2]: Հայկական լեռնաշխարհում սկյութների երբեմնի ներկայության մասին նրա հետևությունն արվում է սկյութական մշակույթին բնորոշ հեծելասարքերի հայտնաբերման փաստերի հիման վրա:

Անվանի գիտնականը նաև ուշադրություն է դարձրել ուրարտական բնակավայրերի բնակելի թաղամասերում հետագա դարաշրջանների դամբարանների առկայությանը, որը հուշում է դրանցում բնակության ժամանակավոր դադարի

---

[1] Գ. Ա. Տ ի ր ա ց յ ա ն. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար). – ՊԲՀ, 1980, № 4, էջ 84–95, ն ո ւ յ ն ի՝ Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ – մ. թ. ա. III դ. վերջ). – ՊԲՀ, 1981, № 2, էջ 68–84:

[2] Գ. Ա. Տ ի ր ա ց յ ա ն. Հ. Ժամկոչյան. Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում, Երևան, 1961. – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1962, № 4, էջ 87–95:

մասին: Ուրարտական քաղաքների անկման պատճառներից մեկն էլ նա համարում է թշնամու կողմից դրանց ոռոգման կառույցների ավերումը: Քանի որ աքեմենյան ժամանակաշրջանում ուրարտական որոշ խոշոր բնակավայրեր եղել են վարչական կենտրոններ, ուստի եզրակացություն է արվում, որ Վանի թագավորության անկումից հետո այդ քաղաքների գործունեությունը վերսկսվել է: Մասնավորապես, քաղաքային կյանքը շարունակվել է Տուշպա–Վանում, Էրեբունի–Արինբերդում, Արգիշտիխինիլի–Արմավիրում: Այս բոլոր դրույթները Գ. Տիրացյանի կողմից ապացուցվում են հնագիտական տվյալների հիման վրա: Հին հայկական պետության կազմավորման հետ՝ գիտնականի հետազոտության շրջանակում են եղել Ուրարտու–Հայաստան խնդիրը[3], Կոմմագենե երկիրն ու Հայաստանը թեման[4], Հայաստանի վաղմիջնադարյան մշակույթի ակունքները[5] և մի շարք այլ կնճռոտ հարցեր: Այս խնդիրների հիմնավոր մեկնաբանությանը նպաստել են նրա ընդգրկուն աշխարհայացքը, մեկ տասնյակ հին ու նոր լեզուների տիրապետելը:

Շատ լայն և խորն էր նաև Գ. Տիրացյանի բուն հնագիտական ուսումնասիրությունների ոլորտը, իսկ դրա առանցքն էին կազմում Հին Հայաստանի հնագիտության հարցերը: Նա առաջին գիտնականն էր, որը ձեռնամուխ եղավ լուծելու հին հայկական մշակույթի պարբերացման հիմնախնդիրը՝ այդ նպատակով օգտվելով ինչպես հնագիտական աղբյուրների ընձեռած տվյալներից, այնպես էլ գործիմացորեն ներառելով Հին Հայաստանի թե՛ սոցիալ–տնտեսական, թե՛ քաղաքական պատմության տեղեկությունները: Հին Հայաստանի մշակույթը բաժանվեց զարգացման երեք հաջորդական շրջափուլերի՝ մ. թ. ա. VI – IV, մ. թ. ա. III–I և մ. թ. I–III դարեր[6]: Հնագիտական հետագա հայտնագործությունների ու հետազոտությունների ընթացքը ցույց տվեց հին հայկական մշակույթի պարբերացման «տիրացյանական» սանդղակի կիրառման նպատակահարմարությունը, թեև սկզբնական շրջանում այն առաջադրվել էր համեմատաբար սակավաթիվ հնագիտական տվյալների հիման վրա: Մեր օրերում էլ այն չի կորցրել իր կիրառական նշանակությունը: Խորաթափանց գիտնականի՝ ռուսերեն հրատարակված «Հին Հայաստանի մշակույթը մ. թ. ա. VI – մ. թ. III դարերում (ըստ հնագիտական տվյալների)» (Երևան, 1988) ընդհանրացնող մենագրությունն այսօր էլ ընկալվում է որպես միջգիտակարգային ուսումնասիրություն և մնում է հնագետների, պատմաբանների, մշակութաբանների ու հարակից այլ մասնագիտությունների տեր գիտնականների սեղանի գիրքը: Այս աշխատության մեջ տրված են

[3] Գ. Ա. Տ ի ր ա ց յ ա ն. Ուրարտու և Հայաստան (նյութական մշակույթի ժառանգորդության հարցի շուրջը). – ՊԲՀ, 1978, № 1, էջ 43–60, ն ո ւ յ ն ի՝ Урарту и Армения (к вопросу о преемственности материальной культуры). – «Вестник общественных наук» АН АрмССР, 1968, № 2, с. 17–30.

[4] Г. Т и р а ц я н. Страна Коммагена и Армения. – «Известия общественных наук» АН АрмССР, 1956, № 3, с. 69–74.

[5] Г. А. Т и р а ц я н. К античным истокам армянской раннесредневековой культуры (по археологическим данным). – ИФЖ, 1983, № 2–3, с. 55–64.

[6] Г. Т и р а ц я н. Опыт периодизации истории материальной культуры Армении (VI в. до н. э. – III в. н. э.). – «Известия общественных наук» АН АрмССР, 1957, с. 77–90.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

հին հայկական մշակույթի զարգացման հազարամյա փուլին վերաբերող բազմաթիվ հարցերի պատասխաններ:

Ականավոր հնագետի գիտական աշխատություններում հին հայկական մշակույթի ժամանակագրական ստորին սահման է ընդունվում մ. թ. ա. VI դարը: Սակայն նա բազմիցս հավաստել է, որ քննարկվող մշակույթի ակունքները ժամանակի առումով շատ ավելի խորն են: Այդ մշակույթի արմատները հասնում են վաղ երկաթի ու երկաթի լայն տարածման դարաշրջաններ: Ստույգ փաստերի հիման վրա նա ապացուցել է Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթների շարունակականությունը բնակարանաշինության ու ամրոցաշինության, տաճարների ու դամբանների կառուցվածքի, թաղման գույքի և հավատալիքների, քարգործության ու մետաղագործության, տարազի ու խեցեգործության ոլորտներում: Լեզուների փայլուն իմացությունը, մասնագիտական համապարփակ գիտելիքները հատկապես դրսևորվում էին տարբեր մշակույթների փոխառնչությունները հետազոտելիս: Գնահատելի է Գ. Տիրացյանի ավանդը մի շարք այլ գիտական հարցերի մեկնաբանման գործում՝ ուրարտական քաղաքակրթությունը և աքեմենյան Իրանը, քաղաքաշինությունը հին Հայաստանում, արտաշեսյան սահմանաքարերը և դրանց արձանագրությունների վերծանումը, հարևան երկրների հետ Հայաստանի առևտրական կապերը, դրամների վրա դրոշմված դիմաքանդակների գեղարվեստական առանձնահատկությունները և այլն:

Իր հնագիտական գործունեությունն սկսելով Կարմիր բլուրի և Գառնիի արշավախմբերում, մասնակցելով հին մայրաքաղաք Արտաշատի հնագիտական արշավախմբի աշխատանքներին՝ Գ. Տիրացյանը պեղումներ է իրականացրել նաև Հացավանում, Փարաքարում, Դովրիում, հնագիտական հետազոտություններ է կատարել Արագածոտնի և Կոտայքի մարզերում: Նրա համահեղինակությամբ լույս է տեսել «Հին Հայաստանի ապակին (I–IV դդ.)» ուսումնասիրությունը[7]: Երկար տարիներ՝ 1970 թվականից մինչև իր կյանքի ավարտը, նա ղեկավարել է հին Հայաստանի առաջին մայրաքաղաք Արմավիրի պեղումները, որոնք դարձել են իր դաշտային հնագիտական աշխատանքների անկյունաքարը: Գ. Տիրացյանի և նրա գործընկերների ջանքերի շնորհիվ հին Արմավիրը՝ որպես հնագիտական դասական հուշարձան, հայտնի է դարձել միջազգային գիտական հանրությանը, դրա պեղումների արդյունքների վերաբերյալ լույս են տեսել մի քանի տասնյակ գիտական աշխատություններ և դեռ շարունակում են հրատարակվել: Արմավիրի արշավախումբը դարձավ երիտասարդ հնագետների դպրոց: Այդ դպրոցն անցած հնագետներն այսօր էլ շարունակում են իրենց ուսուցչի գործը Արմավիրում և այլ հուշարձաններում:

Ճանաչված գիտնականը «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական հրատարակության առաջին հատորի (Երևան, 1971) և Կովկասի ու Միջին Ասիայի հնագույն պետություններին նվիրված «ԽՍՀՄ հնագիտություն» ռուսերեն հատորի (Մոսկվա, 1985) մի շարք հոդվածների հեղինակ է: Նա բազմաթիվ հոդվածներ է տրամադրել նաև «Հայկական սովետական հանրագիտարան»-ին՝ «Ակունք», «Արմազի», «Արսամեա», «Արտաշատ», «Երվանդունիներ», «Երվանդ Ա Սակավակյաց», «Տիգրան Երվանդյան», «Երվանդ Բ», «Երվանդ Գ», «Երվանդ Դ Վերջին», «Կոմմագենե», «Հացավան», «Մարաստան», «Նեմրութ», որոնք ծավալով

[7] Բ. Ն. Առաքելյան, Գ. Ա. Տիրացյան, Ժ. Դ. Խաչատրյան. Հին Հայաստանի ապակին (I–IV դդ.), Երևան, 1969:

փոքր, սակայն բովանդակությամբ խոր ու ընդգրկուն գիտական շարադրանքներ են: Մահվանից հետո էլ շարունակվում են տպագրվել նրա մենագրությունները՝ «Արմավիր»-ը՝ ֆրանսերեն[8], «Ուրարտուից՝ Հայաստան»-ը՝ անգլերեն[9]:

Գ. Տիրացյանը հեղինակ է 4 մենագրության, շուրջ 160 գիտական հոդվածի, 5 գրախոսության, խմբագրել է մեկ տասնյակից ավել մենագրություններ և գիտական ժողովածուներ: Նա կազմել է Լեոյի «Հայոց պատմություն» աշխատության առաջին հատորի ծանոթագրությունները և հեղինակել Քսենոփոնի «Անաբասիս»-ի հայերեն հրատարակության մեկնությունները:

Անխոնջ գիտնականը օր օրի ժողովում էր Իրանում ու Արևմտյան Հայաստանում առկա ուրարտական և հին հայկական մշակույթների առկայության վերաբերյալ նորահայտ հնագիտական փաստերը՝ հմտորեն իմաստավորելով դրանք ու սահմանելով դրանց տեղը Հայկական լեռնաշխարհի համապատասխան դարաշրջանների պատմամշակութային զարգացումների ընդհանուր համակարգում:

Ուշիմ հետազոտողի ձիրքը և լեզուների գերազանց իմացությունը գիտնականին հնարավորություն էին տալիս լիարժեքորեն մասնակցել միջազգային գիտական կյանքին, արտասահմանյան տարբեր գիտաժողովներում բովանդակալից զեկուցումներով ներկայացնել հայագիտության նվաճումները: Որտեղ էլ որ բանախոսեր Գ. Տիրացյանը, նրա արտահայտած գաղափարներն առանձնանում էին իրենց ինքնատիպությամբ, խորությամբ ու պարզությամբ: Դրանցում դրսևորվում են ինչպես խոհուն հայագետի, պատմաբան-հնագետի, այնպես էլ հմուտ արևելագետի ու արվեստաբանի ճկուն մտածողությունը և համապարփակ գիտելիքները: Հուսով ենք՝ այդ գաղափարները գնահատելի կլինեն նաև հետագա սերնդի հայագետների համար: Վաստակաշատ գիտնականը Հայաստանում անցկացված մի քանի միջազգային ու միութենական գիտաժողովների կազմակերպիչն էր, անհրաժեշտության դեպքում՝ նաև արհեստավարժ թարգմանիչը:

Ոչ գիտական պարբերականներում նա հանդես էր գալիս դյուրըմբռնելի հոդվածներով, որոնք առնչվում էին պատմահնագիտական հուշարձանների համաժողովրդական պահպանության և թանգարանային գործի արդյունավետ կազմակերպման խնդիրներին: Այդուհանդերձ, Գ. Տիրացյանի՝ հանրամատչելի ամսագրերում և թերթերում տպագրված հաղորդումներն ու հարցազրույցները զերծ չեն գիտական արժեքից. դրանց գլխավոր նպատակը, թերևս, գիտության հանրայնացումն է:

Գ. Տիրացյանի տաղանդն անկաշկանդ ձևով դրսևորվել է նաև մի շարք հեղինակների պատմագիտական ու հնագիտական ուսումնասիրությունների գրախոսության ասպարեզում[10]: Տարբեր լեզուներով տպագրված աշխատանքներ էր

[8] G. Tirac‘yan. Armawir. – “Revue des Études Arméninnes”, Tome 27. Paris, 1998–2000, pp. 135–300.

[9] From Urartu to Armenia, Florilegium Gevork A. Tirats‘yan, Edited by R. Vardanyan. Neuchâtel, 2003.

[10] Գ. Ա. Տիրացյան. Հելլենիստական նոր կենտրոն Կոմմագենե երկրում. F. Dörner, Th. Goell, Arsameia am Nymphaios, Berlin, 1963. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, № 3, էջ 90–96, նույնի՝ Ռ. Լ. Մանասերյան, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987. – ՊԲՀ, 1987, № 4, էջ 207–209, նույնի՝ А. А. Мартиросян. Аргиштихинили. Археологические памятники Армении, № 8, Урартские памятники, выпуск I, Ереван, 1974. –

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

կարդում և վերլուծում պարզ ու հասկանալի լեզվով, քանի որ քաջատեղյակ էր իր բնագավառի կարևոր նորություններին և միշտ ծանրակշիռ ասելիք ուներ: Դրանով նա ընդգծում էր քննարկվող խնդիրների արդիականությունը և մասնագետների ուշադրությունը հրավիրում դրանց վրա: Այս բնագավառում ակնառու էր գիտնականի նրբանկատ ու հարգալից և, միևնույն ժամանակ, քննադատական վերաբերմունքը տարբեր երկրներ ներկայացնող իր գործընկերների գիտական ուսումնասիրությունների հանդեպ:

Գ. Տիրացյանը հատկապես ուշադիր էր ավագ սերնդի գիտնականների նկատմամբ, առիթը բաց չէր թողնում իր շնորհակալությունը հայտնելու նրանց և ըստ արժանվույն գնահատելու իր ուսուցիչների ու գործընկերների գիտական վաստակը: Այսօր էլ հետաքրքրությամբ են ընթերցվում գիտական հանդեսներում տպագրված՝ գիտության երախտավորներ Կ. Տրևերի, Ա. Սահինյանի, Ս. Երեմյանի, Բ. Պիոտրովսկու, Բ. Առաքելյանի կյանքի և գիտական գործունեության վերաբերյալ Գ. Տիրացյանի հակիրճ, բայց տարողունակ հոդվածները: Նա չէր մոռանում նաև օգնել սկսնակներին, միշտ պատրաստակամ էր պատասխանելու երիտասարդ գործընկերների հարցերին, ուղղելու նրանց սխալները՝ առանց ի պաշտոնե պարտավորված լինելու: Հին հայկական մշակույթն ուսումնասիրող և այսօր ճանաչում ունեցող գիտնականներից ոմանք իրենց ատենախոսությունները շարադրել ու պաշտպանել են Գ. Տիրացյանի գիտական ղեկավարությամբ:

Գ. Տիրացյանը նաև գիտության շնորհալի կազմակերպիչ էր: Կյանքի վերջին տարիներին վաստակաշատ գիտնականը Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենն էր: Նա նույն համեստ, արհեստավարժ ու աշխատունակ անձնավորությունն էր, ղեկավարում էր անաղմուկ, առանց ձայնը բարձրացնելու: Այդ ծանր ժամանակներում ինստիտուտի անխափան գործունեությունն ապահովելը վիթխարի ջանք էր պահանջում: Ֆինանսական անլուծելի թվացող դժվարությունները հաղթահարելու նպատակով, Գ. Տիրացյանի նախաձեռնությամբ և անձնական կապերի շնորհիվ, իրագործվեց արտասահմանյան գործընկերների հետ արշավախմբեր ստեղծելու գաղափարը: Կազմակերպվեցին հայ–ամերիկյան, հայ–բելգիական, հայ–ռուսական հնագիտական արշավախմբերը, հեռանկարում պլանավորված էին հայ–իտալական արշավախմբի աշխատանքները: Օրակարգում էր նաև Արցախում պեղումներ կատարելու խնդիրը: Այդ հնարավորությունները պարզելու և իրավիճակին ծանոթանալու նպատակով Արցախ են գործուղվել ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ: Դրանով սկիզբ է դրվել Արցախի հայագիտական կենտրոնի հիմնադրմանը: Երիտասարդ կարող ուժերը գործուղվում էին արտերկիր՝ մասնագիտական հմտությունների վերապատրաստման նպատակով: Գ. Տիրացյանը փնտրում և գտնում էր մեթոդներ՝ պատրաստելու նոր ժամանակներին համապատասխան գիտաշխատողներ, որոնց մասնագիտական գիտելիքները, արհեստավարժությունը և հին ու նոր լեզուների իմացությունը թույլ կտային նրանց դուրս գալ գիտական նեղ շրջանակներից՝

ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, № 3, էջ 111–114, Նույնի՝ Cyril Toumanoff, The Orontids of Armenia, Studies in Christian History. Washington, 1963, pp. 277–354. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 2, էջ 246–251:

զբաղվելով մեր տարածաշրջանում մշակութային փոխառնչությունների և միջգիտակարգային այլ խնդիրների ուսումնասիրությամբ: Նա մշտապես մտածում էր գիտնականի իր տեսակը վերարտադրելու մասին: Տպավորվել է նրա վերջին ելույթը 1992 թ. ձմեռնամուտին՝ Երևանի պետական համալսարանի ընդարձակ ու ցուրտ դահլիճում, որտեղ նա ամփոփում էր ուսանողական գիտաժողովի աշխատանքները:

Գ. Տիրացյանն օժտված էր մարդկանց հետ տևական ջերմ կապեր հաստատելու զարմանալի շնորհով: Հատկապես ուսանելի են նրա մտերիմ հարաբերությունները լենինգրադյան դպրոցն անցած իր սերնդի հայ գործընկերների հետ: Գիտության նվիրյալների այդ աստղաբույլում նա, թերևս, ամենաքիչ տիտղոսավորն էր: Բայց, տարիներ անց, երբ խոսք էր լինում հայ գիտնականների նշանավոր այդ խմբի մասին, առաջինը հնչեցնում էին Գ. Տիրացյանի անունը: Հանրաճանաչ ուսումնասիրողների այդ խմբի արևելագետ իր բարեկամները, անկասկած, գնահատում ու սիրում էին իրենց տաղանդավոր հնագետ ընկերոջը:

Գ. Տիրացյանը մահացել է Երևանում 66 տարեկան հասակում՝ ուժերի ծաղկման շրջանում՝ 1993 թ. հունվարի 17-ին:

Գ. Տիրացյանը կյանքի մարդ էր, առույգ՝ հոգով և մարմնով, դրա համար էլ սիրում էր երիտասարդներին: Նրանց հետ քայլում էր Երևանի փողոցներով ու զրուցում տարբեր թեմաների՝ մշակութային նորությունների, դասական երաժշտության, կերպարվեստի ու գրականության մասին: Աշխատավայր գնալ-գալու համար ծառայողական մեքենայից չէր օգտվում: Բարյացակամ, կիրթ և ազնիվ անձնավորություն էր, իսկական մտավորական ու քաղաքացի: Հայ մարդ էր՝ եվրոպացու արտաքինով, խոհուն և ուշադիր հայացք ուներ ու փոքր-ինչ օրորուն քայլվածք: Եզակի անհատականություն էր Գ. Տիրացյանը՝ ինքն իր անձի հանդեպ անփույթ և մեծ հոգու տեր: Շատերի համար նա ականավոր գիտնական էր, շատերի համար էլ՝ անփոխարինելի ընկեր: Սրտի ջերմությունը նա բաժանում էր իր շրջապատի մարդկանց, դժվարին պայմաններում հուսադրում և համախմբում էր նրանց: Հայ հնագիտության երախտավորի գործընկերները նրան սիրով ու ջերմությամբ են հիշում, իսկ նրա աշակերտները՝ խոնարհումով ու ակնածանքով:

Միշտ պայծա՛ռ մնաս, Գևորգ Տիրացյան, օրհնվի՛ քո ծնունդը:

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական մշակույթներ, թաղման ծես, կիմերական հնագիտական մշակույթ, մշակութային փոխառնչություններ: Հեղինակ է 5 գրքի և 80 հոդվածի: ORCID: 0000-0002-6696-0093. gstumanyan@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2